

ԺՈՂՈՎՐԴԱԿԱՆ ԲԺՇԿՈՒԹԻՒՆ

ԶԻՆԱՑԻ ԲԺԻՇԿՆ ՈՒ ՀԻՒԱՆԴԸ

Զինացին օրուան մարդ դարձաւ

Կ'արժէ ներկայացնել չինական բժշկութիւնն ալ, որ կը կիրարկուի բոլորովին ժողովրդական եղանակներով և վայել է գրել այս սիւնակներուն մէջ:

Զինաստանի մէջ բժշկական վկայական գոյութիւն չունի Քանի մը դարմանաբանական ծանօթութիւններ, քիչ մը համբաւ ամէնաբոյժի, բաւական է ստանալու համար բժիշկի տիտղոսը, զոր մենք համալսարանի մէջ երկար ճգնութեամբ մը միայն կը շահինք:

Երեւակայեցէք որ բժիշկը նստած է իր ազնուաշուք հիւանդին դիմաց: Նախ կըսկսի քաղաքավարական խօսակցութիւն մը բրինձը ուտելուն կամ մարսելուն մասին. յետոյ «ազնուաշուք» յաճախողին հիւանդութեան ազնուական տեսակին վրայ Այս ձևով խօսակցութիւն մը կը դիւրացնէ քաղել կարեւոր տեղեկութիւններ, որոնք անհրաժեշտ են արտաճանաչութեան համար: Բժիշկը կը բռնէ հիւանդին աջ ձեռքը, կը հանգչեցնէ բարձիկի մը վրայ և իր հինգ մատները կը խաղցնէ դաստակին շուրջ: Քառորդ մը, այսպէս ալ դադտակին վրայ դաշնակահարի նման մատները խաղցնելէ ետք, ձեռք կ'առնէ ձախ դաստակը: Յետոյ, մատը ճակտին կը դնէ եւ քիչ մը կը խորհի: Ու, այս անգամ, կը սկսի երկու դաստակները միաժամանակ բռնած՝ դարձեալ քննել: Այս ամէնը՝ բազկերակին քննութեան համար, որովհետեւ Զինացիները կը կարծեն թէ բազկերակը մէկ հատ չէ, այլ բաղմամբիւ: Այսպէս կայ բազկերակ մը՝ սիրտի համար, ուրիշ մը՝ թոքի համար, լեարդի համար: Վերջապէս, գլխաւոր բազկերակները 5 են, պէտք է որ բժիշկը լաւ քննէ այդ բազկերակները և լաւ հաշուի առնէ անոնց յարաբերական համեմատութիւնները:

Զինացի «ազնուաշուք» յաճախորդը ընդհանրապէս կը հիւանդանայ կա'մ ցուրտի, կա'մ տաքի պատճառով:

Եթէ ջերմ ունի յաճախորդը, ուրեմն կը նշանակէ որ իր ներքին ազնուական անդամներուն մէջ հրդեհի նման տաքութիւն մը չորացուցած է ջրային տարրերը, և հիւանդը կը տառապի զովարար նիւթերու պակասէն: Ուստի, անհրաժեշտ է որ հիւանդին ներքին կազմութեան մէջ զրկուի զով օդ, իջեցնելու համար տաքութեան աստիճանը:

Այսպէս արտաճանաչութիւնը կատարելէ յետոյ, դիւրին է ճարել միջոցները: Զինացին շատ լաւ գիտէ որ կանանչ սիսեռը զովարար

է՛, կը խաշէ և կը խմէ ջուրը, մարելու համար տենդը՝ Սակա՛յն, կը յանձնարարէ բժիշկը, շատ խմելով հիւանդութիւնը կը բարդանայ և հակառակ հիւանդութիւն մը կը ծագի։ Երբ այս գեղը ազգու չըլլայ, խաշէ վարունգը կամ սեխը և խմէ։

Զինացի բժիշկը վստահ է որ իր հիւանդը ա՛լ կ'աղէկնայ այս գեղերով։

Ու եթէ ծանրացաւ հիւանդութիւնը, այն ատեն կը ստիպուի գրեկ նշանաւոր գեղագիրը։ Հոն կը գրէ ամենագոր գեղերը։ Դեղագիրին թուղթը պատի ազդերու նման խոշոր է, կը նշանակուին գեղերը վրան՝ վերէն վար, ուղղահայեաց։ Մեհենագիրեր, որ կը ներկայացնեն բոյսեր, տերեւներ, փոշիներ, տնկարմատներ և ուր անխուսափելի է Թա-ճուանկը (խաւարծիլ), և քիւ-փին (նարինջի կեղև)։

Ամէն գեղ յաղուկ գործարանի մը վրայ միայն կ'ազդէ։ Իւրաքանչիւր գործարանի համար կը գրուին գեղեր որոնք կը վերահաստատեն ընդհանուր առողջական ներդաշնակութիւնը։ Սովորութիւն է, սակայն, մէկ ամանի մէջ խաշել այդ բոլոր գեղերն ալ, միասին, և յետոյ խմել ջուրը, սեւ գեղնորակ ու գարշ։

Ծանր պարագաներուն, բժիշկը կը դիմէ, աստուածային, աննման զօրութեամբ գեղին՝ Լինկ-փաօին, գերբնական գանձին։

Կարմիր, մանրութիկ հատիկներն են անոնք և մուշկ կը հոտին։ Տիեզերական գեղ մը, որ կը բժշկէ ամէն բան։ Սակայն դժուար է որոշել չափը և այն հեղուկը, որուն հետ պիտի խառնուի իր բաղադրութիւնը կը մնայ դադտնիք։ Միայն Փէքինցի ընտանիք մը կրնայ չիներ։ Այս ընտանիքը սերունդէ սերունդ իր որդիներուն կը փոխանցէ դադտնիքը և սուղ գիներով կը ծախէ Փէքինի մէջ։ Դեղագիրը գրուեցաւ Պէ՛տք է չիներ անմիջապէս։ Ինչո՞ւ աճապարել։

Բժիշկը միեւնոյն ատեն գեղավաճառն է։ Ու, գեղագիրին պատրաստութենէն յետոյ կը սկսի հիւանդին ու բժիշկին միջեւ տարօրինակ սակարկութիւն մը։ Հիւանդը կը խնդրէ որ աժան գեղեր տրուին իրեն, շատ դրամ չծախսելու համար։ Հոգ չէ թէ, գեղը աժանոց ըլլալուն պատճառով, ինքն ալ շատ դանդաղ առողջանայ։ Բժիշկը, սակարկութեան մէջ, ստիպուած է միշտ տեղի տալ, ապա թէ ոչ հիւանդը կը փոխէ խանութը։ Յաճախ ալ կը պատահի որ, հիւանդին ընտանիքը միջամտէ և յայտարարէ թէ աւելի լաւ է՝ ձգել հիւանդութիւնը իր բախտին, քան թէ աւելորդ ծախքեր ընել։ Նոյն իսկ, կը պատահի ալ որ, հիւանդը խորհի թէ աւելի լաւ է գեղին տալիք դրամը պահել և գեղեցիկ դագաղ մը չիներու յատկացնել, քան թէ ծախսէ և մեռնի պարզ դագաղի մը մէջ։ Զէ՛ որ ուշ կամ կանուխ պիտի մեռնի, յարմարը «ազնուական» թաղումը ապահովելն է։

Եւ այս քաղցր մտածումով, մեր Զինացի ազնուաշուք հիւանդը կը վճռէ բժիշկը և կը կանչէ դագաղ չինոգ ատաղձագործը։

Շ. ՆԱՐԴՈՒՆԻ